



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

10 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Փ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Մ. Թոփուլյանի
Դ. Նազարյանի

Զննության առնելով քաղաքացի Գայանե Խոջայանի անհարական դիմումի
ընդունելիության հարցը,

ՊԱՐՁԵՅ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գայանե Խոջայանը 2010թ. հոկտեմբերի 25-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 35-րդ, 42-րդ և 48-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհարական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց փուլում է՝

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վիճարկվող 225-րդ հոդվածը վերաբերում է բնակելի բարածության օգբագործման իրավունքին: Դիմողի կարծիքով՝ ընդունելի հարաբերությունների նկատմամբ, մասնավորապես՝ ամուսինների բնակության իրավունքին առնչվող գործերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմի կիրառումը, երբ անդեսվում են ՀՀ ընդունելի օրենսգրքի 4-րդ և 24-րդ հոդվածների պահանջները, չի ապահովում իր՝ խախտված իրավունքներն արդյունավել դարձական պաշտպանության միջոցով վերականգնելու՝ սահմանադրահրավական մակարդակով ամրագրված հնարավորության իրացումը: Դիմողը գրնում է, որ վիճարկվող հոդվածն անորոշություն է սպեղծում եւ հնարավորություն է դրականացնելու համար:

2. Դիմումին կցված դադարական ակտերի եւ դիմողի փաստարկների համալիր վերլուծությունը վկայում է, որ վերոնշյալ դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարցը: Շիշյան ակնհայտորեն երեսում է նաև ՀՀ սահմանադրական դադարական ուղղված դիմողի խնդրանքից՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմի կիրառումը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 35-րդ, 42-րդ եւ 48-րդ հոդվածներով ամրագրված նորմերի պահանջներին հակասող եւ անվավեր»:

ՀՀ սահմանադրական դադարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԿՈ-21 որոշման մեջ արդահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջարող դիմումներ: Եթե արարար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախադրեսված հիմք:

Ենելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 2 դադարական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացի Գայանե Խոջայանի անհադարձական դիմումով գործի քննությունը մերժել:

